ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 156
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի *գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-002-0248-0017 կադաստրային ծածկագրով 0.3985 հա մակերեսով հողամասից 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	04-002-0248-0017 կադաստրային ծածկագրով 0.3985 հա մակերեսով հողամասից 0.04 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
3. Վաղարշապատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Էջմիածին քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «22» «հուլիսի» 2022 թ.